

Թիւ 26016  
Սեպտեմբեր 19, 1978

Մեծայարդ  
Տիար Սուրէն Եվրան  
Թորոնթօ.

Յարգելի Պր. Եվրան,

Առաջնորդարանի Փոխանորդ Հոգած. Յուսիկ ծ.Վրդ.Պաղտասեան մեզի ներկայացուց իր տեղեկագիրը՝ Թորոնթոյի Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ իր Նախագահութեամբ գումարուած ժողովին մասին, մասնակցութեամբ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդին, ինչպէս նաեւ մեր կողմէ Նշանակուած հինգ ազգայիններուն:

Թորոնթոյի մէջ երկրորդ ծուխ մը կազմելու մեր ծրագիրը յառաջ տանելու համար անհրաժեշտ է Նախական կարգ մը աշխատանքներ կատարել, եւ այս նպատակով կը փափաքինք որ դուք զլիաւորէք մեր կողմէ Նշանակուած հինգ ազգայիններէն բաղկացած յանձնախումբը, եւ համիր հետեւեալ աշխատանքին ձեռնարկել.

1. Քարտէսի վրայ Նշանակել իրեւ սահման երկու ծուխերու ՝ "Կիբօրիա Փարք Ավընիւ" մեծ պողոտան որ կ`երկարի Հիւսիսէն դէպի հարաւ:
2. Երկրորդ ծուխի սահմանը պիտի ըլլայ այս գիծէն Արեւելք գտնուող մասը: Համեցէք այս Արեւելեան մասին մէջ մատիտով շրջանակներ գծել եւ նշել հայաբնակ շրջանները եւ ստուգել թէ քանի՞ հայ ընտանիքներ կը բնակին իւրաքանչիւր շրջանակի մէջ:
3. Համեցէք կազմել իւրաքանչիւր շրջանակի մէջ բնակող հայութեան անուններու եւ հասցէներու ցանկը:
4. Համեցէք առանձին արձանագրել ցանկը անուններու եւ հասցէներու Արեւմտեան բաժնին մէջ գտնուող այն ընտանիքներուն որոնք 2<sup>րդ</sup> հաւաքած ցանկին մէջ ունիք:
5. Այս բոլոր տեղեկութիւնները, քարտէսով եւ անուններու ցանկերով համեցէք մեզի դրկել, օրինակ մը յանձնելով Թորոնթոյի Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ ծխական Խորհուրդին, եւ օրինակ մը 2եր քով օրինակ՝ ծխական Խորհուրդին, որպէսզի ամբողջական ցանկ մը ստանք ծխական Խորհուրդէն, զայն ներկայացնենք Թեմական Խորհուրդին

Եւ Թորոնթոյի մէջ երկրորդ ծուխը կազմակերպելու համար ուրիշ ազգա-  
յիններ եւս նշանակենք իբրեւ անդամ կազմակերպող յանձնախումբին:

Սպասելով վերոյիշեալ տեղեկութեանց, Զեզի եւ Յանձնախումբի միւս  
անդամներուն կը ցանկանք առաւել քաջառողջութիւն եւ յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍՆՈՊՈՍ  
Առաջնորդ

ՕՐԻԱՑ՝ Ծրագրայ բարեպաշտե.